Եկեղեցիների համաշխարհային խորհրդի
հայաստանյան միջեկեղեցական
բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ
ACT դաշինքի անդամ

ACT-D ուղեցույցի փորձարկում եւ կիրառում

Երեւան
2010

Ուսումնասիրությունն իրականացնող՝ Աննա Ոսկանյան

Խմբագիր՝ Հեղինե Մկրտչյան

Հրատարակությունն իրականացրել է «ԵՀԽ հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան-ACT Alliance հիմնադրամը» Diakonisches Werk der EKD e.V. for Bread for the World-ի օժանդակությամբ

Բովանդակություն

1. Ներածություն 4

2. Հետազոտվող ծրագրերի համառոտ նկարագիրը 5

2.1 Գյումրիի սոցիալ-կրթական կենտրոն 5

2.2 Մեծամորի համայնքային կենտրոն 7

3. Հետազոտության նկարագրությունը 8

4. Հետազոտության նպատակը 11

5. Ընթացքը եւ մեթոդաբանությունը 11

5.1 DNH մեթոդ 12

5.2 PIA մեթոդ 13

5.3 Making a Difference մեթոդ 15

6.Շահագրգիռ կողմերը եւ հարցվողները 16

7. Հետազոտության արդյունքները. ծրագրերի ազդեցության գնահատում 17

7.1 DNA մեթոդ 17

7.2 PIA մեթոդ 24

7.3 Making a Difference մեթոդ 30

8. Հիմնական եզրակացություններ. գործունեության գնահատում եւ հանձնարարականներ 34

9. Եզրակացություններ հետազոտության մեթոդների կիրառման վերաբերյալ 36

Ինչ փոփոխություններ է բերել ՀԿՍ-ն որպես Էկումենիկ ընտանիքի անդամ 39

Օգտագործված գրականության ցանկ 41

1. Ներածություն

Գնահատվող ծրագրերը գործում են Հայաստանի երկու քաղաքներում՝ Գյումրիում եւ Մեծամորում: Առաջինն իր նշանակությամբ եւ բնակչության թվով հանրապետության երկրորդ քաղաքն է, երկրորդն ի սկզբանե կառուցվել է որպես հայկական ատոմակայանը սպասարկող քաղաք:

Գյումրին Շիրակի մարզկենտրոնն է եւ Հայաստանի ամենահին քաղաքներից մեկը՝ հարուստ պատմությամբ եւ ավանդույթներով: Պաշտոնական տվյալներով քաղաքում այսօր բնակվում է մոտ 150 000 մարդ: Այս թվաքանակը ավելին կլիներ, սակայն Գյումրին խիստ տուժել է 1988 թվականի ավերիչ երկրաշարժից, որը ինչպես հոգեբանական, այնպես էլ տնտեսական խորը հետք է թողել քաղաքի կյանքի վրա: Նախկինում Գյումրին եղել է արդյունաբերական քաղաք, սակայն այսօր ձեռնարկությունների մեծ մասը չի գործում: Բնակչության աղքատության ցուցանիշը հասնում է 47%-ի, իսկ գործազրկությունը, ըստ պաշտոնական տվյալների՝ շուրջ 40 % է: Բնականաբար, նման պայմաններում անհնար է խոսել համայնքի բարեկեցության մասին, հատկապես, որ Շիրակի մարզը Հայաստանի ամենաաղքատ եւ միգրացիայի ամենաբարձր ցուցանիշ ունեցող մարզերից մեկն է:

Այս ամենի հետ մեկտեղ Գյումրին եղել եւ այսօր էլ երկրի մշակութային կենտրոններից մեկն է՝ իր ինքնատիպ ավանդույթներով եւ յուրահատուկ քաղաքային մշակույթով:

Քաղաքում գործում են բազմաթիվ ՀԿ-ներ, սոցիալական ոլորտն աչքի է ընկնում լայնածավալ եւ բազմակողմանի գործունեությամբ, առկա են միջազգային, պետական եւ ոչ պետական կազմակերպությունների ներկայացուցչություններ:

Գյումրիից արտագաղթածները մեծ սփյուռք են կազմում Ռուսաստանում եւ այլ երկրներում, ինչը բազմակողմանի ազդեցություն ունի քաղաքի կյանքի վրա:

Մեծամորը գտնվում է Արմավիրի մարզում եւ քաղաքի կարգավիճակ է ստացել միայն 1992 թվականին: Քաղաքը գտնվում է կիսաանապատային գոտում եւ հիմնականում զուրկ է բուսականությունից: Բացի այդ, ատոմակայանին անմիջական մոտ գտնվելու հանգամանքը քաղաքի համար հավելյալ բնապահպանական վտանգ է ստեղծում: Մեծամորի

բնակչությունը մոտ 12 000 է, որից 1/3-ը գործազուրկ է: Փորձագիտական տվյալներով՝ տղամարդկանց մոտ 60 %-ը աշխատանքային միգրացիայում է՝ ընտանիքներից հեռու: Չնայած նրան, որ պաշտոնական տվյալներով աղքատ է համարվում ընտանիքների միայն 10 %-ը, սակայն ընտանիքների մեծ մասը ապրում է տնտեսական ու հոգեբանական բավական ծանր պայմաններում: Այդպիսի ընտանիքները պաշտոնապես համարվում են լիարժեք եւ կերակրող ունեցող ընտանիքներ, սակայն իրականում ապրում են բաժանված:

Քաղաքում գործում է երկու դպրոց, սակայն չկա եւ ոչ մի գործող մշակութային կենտրոն, ծայրահեղ պասիվ են ՀԿ-ները: Քաղաքում շատ են Երեւանից եւ նրա ծայրամասերից եկած վերաբնակիչները: Լինելով խիստ կարիքավոր՝ նրանք Մեծամոր են տեղափոխվել քաղաքի բնակարանային ցածր գների պատճառով: Բացի այս, փորձագետների գնահատականներով՝ Մեծամորում բնակվում են բավականին մեծ թվով նախկին կալանավորներ: Ընդհանուր առմամբ, քաղաքն առանձնանում է քրեածին իրավիճակի բավականին բարձր մակարդակով:

2. Հետազոտվող ծրագրերի համառոտ նկարագիրը

2.1 Գյումրիի սոցիալ-կրթական կենտրոն

Կենտրոնի նպատակն է Շիրակի մարզի բնակչության կյանքի սոցիալ-տնտեսական եւ կրթա-մշակութային պայմանների բարելավումը, հոգեւոր արժեհամակարգի ձեւավորումը եւ դրա հարստացումը:

Կենտրոնի գործունեության հիմքում ընկած է սոցիալական դիակոնիան՝ եկեղեցու կողմից ամենափարբեր ոլորտներում իրականացվող սոցիալական բնույթի աշխատանքները եւ ծառայությունների համակարգը:

Կենտրոնն իրականացնում է հետեւյալ տեսակի գործունեություն.

1. կրթա-մշակութային
2. սոցիալ-գենդերային
3. երիտասարդական-մասնագիտական

4. Ծրագրային- ֆոնդահայթայթման եւ PR
5. Ֆինանսա-տնտեսական:

Գործունեության այս բոլոր տեսակներն իրենց հերթին բաժանվում են առանձին ծառայությունների եւ միջոցառումների, որոնցում գերակշռում են կրթական խմբերն ու ակումբները.

- արվեստներ
- լեզուներ
- համակարգչային գրագիտություն
- արհեստներ
- ակումբներ՝ ըստ հետաքրքրությունների, այդ թվում՝ ինտելեկտուալ
- տոնական եւ ժամանցային տարաբնույթ միջոցառումներ
- կենտրոնում գործող գրադարան եւ ռեսուրս կենտրոն
- «Հերոնտոս» ակումբը տարեցների շփման համար
- երիտասարդական ծրագիր եւ երիտասարդական սրճարան:

Կենտրոնն իրականացնում է ամենատարբեր բնույթի զարգացման եւ կրթական ծրագրեր, կազմակերպում է սեմինարներ, թրեյնինգներ եւ ուխտագնացություններ: Բացի այդ կենտրոնում գործում է կարի արհեստանոց, որը ստեղծվել է կարի ուսուցման խմբակի հիման վրա: Վերջինիս անդամներից էլ մրցութային կարգով ընտրվել են արհեստանոցի աշխատակիցները: Արհեստանոցը ստեղծված է որպես կենտրոնի ինքնաբավությունը ապահովող աղբյուր:

Հարկ է նշել, որ կենտրոնը, իբրեւ մոդել, ինչպես նաեւ նրա պրակտիկ գործունեությունը բնորոշվում են բազմապլանայնությամբ ու բազմաբովանդակությամբ: Կենտրոնն առնչվում է համայնքի կենսագործունեության շատ խնդիրների հետ՝ ներգրավելով մեծ թվով մասնակիցների: Միաժամանակ, առավել մեծ արդյունավետության հասնելու համար, պահանջվում է նաեւ առավել մեծ կառուցվածքայնություն:

2.2 Մեծամորի համայնքային կենտրոն

Այս կենտրոնի հիմնական նպատակն է աջակցել Մեծամոր համայնքի զարգացմանը, օգնություն ցուցաբերել բնակչության սոցիալապես խոցելի խմբերին իրավունքների պաշտպանության հարցում: Կենտրոնը գործում է քրիստոնեական-ընկերային աշխատանքի սկզբունքներով՝ իրականացնելով հետեւյալ ծառայությունները.

- ☐ սոցիալական
- ☐ բարոյա-հոգեբանական
- ☐ հոգեւոր
- ☐ կրթական եւ հանրայնացման (սոցիալիզացման)
- ☐ մասնագիտական եւ կյանքի հմտությունների (օրինակ՝ ծնողավարման) զարգացում
- ☐ տեղեկատվական եւ խորհրդատվական
- ☐ ապահովություն՝ նյութական օգնության տրամադրում (այդ թվում՝ սնունդ)
- ☐ իրավունքների պաշտպանություն
- ☐ ժամանցի կազմակերպում եւ մշակութային զարգացում:

Կենտրոնն իրականացնում է.

1. համայնքային, խմբային, անհատական եւ ընտանեկան սոցիալական աշխատանք՝ ուղղված բնակչության առավել աղքատ եւ խոցելի շերտերին
2. տնտեսական եւ իրավական օգնություն անապահով ընտանիքներին եւ անձանց
3. համայնքի հոգեւոր ինքնագիտակցության եւ ինքնօգնության բարձրացում
4. էկոլոգիական գիտակցության բարձրացում
5. մշակութային կյանքի ակտիվացում եւ համայնքի անդամների ստեղծագործական ներուժի զարգացում:

Կենտրոնը գործում է համայնքային ցերեկային կենտրոնի ինքնուրույն մշակված մոդելի հիման վրա: Մատուցելով վերոհիշյալ ծառայությունները

եւ առաջնորդվելով բնակչությանն ակտիվացնելու, նրան համայնքային կյանքի մեջ ներգրավելու սկզբունքներով՝ կենտրոնը հիմնականում սպասարկում է երեխաներին, նրանց ընտանիքներին, ինչպես նաեւ համայնքի տարեցներին:

3. Հետազոտության նկարագրությունը

Հետազոտության բոլոր առաջարկված մեթոդները ուսումնասիրելուց եւ ուսումնասիրման ենթակա ծրագրերի բոլոր առանձնահատկություններն հաշվի առնելուց հետո՝ ընտրվել է հետազոտման առավել հարմար երեք մեթոդ կամ մոտեցում.

1. «Չքավորության վրա ազդեցության ուսումնասիրություն» (Poverty Impact Assessment), այսուհետ՝ **PIA**
2. «Մի վնասիր» (Do No Harm), այսուհետ՝ **DNH**
3. «Փոփոխությունների ուսումնասիրության մեթոդ» (Making a Difference Method), այսուհետ՝ **Making a Difference Method**

Առաջին երկու մեթոդներն ստեղծվել են տարբեր ասպարեզներում իրականացվող նախագծերի համար եւ հանդես են գալիս իբրեւ «ազդեցության պլանավորման» մեթոդներ: Դրանց կիրառումը պահանջում է որոշակի մասնագիտական գիտելիքներ եւ իր մեջ ներառում է գործոնային վերլուծության տարրեր (հատկապես՝ PIA-ը):

Երրորդ մեթոդն ուղղված է կոնկրետ փոփոխությունների գնահատմանը եւ նույնպես կարող է կիրառվել տարբեր ոլորտներում՝ չպահանջելով, սակայն, հատուկ պատրաստվածություն:

Բոլոր երեք մեթոդներն ընտրելիս հաշվի է առնվել նաեւ հետազոտության վրա ծախսվող ժամանակի խնայողությունը: Բացի այդ, բոլորն էլ արդյունավետ կերպով կարող են օգտագործվել հատկապես սոցիալական ոլորտի ծրագրերի գնահատման համար՝ այդ գործին մասնակից դարձնելով նրանց, որոնց մատուցվում են ծառայություններ:

Գնահատման երկու նախագծերն ուղղված են բնակչության խոցելի խմբերի աջակցությանը, մասնավորապես, նրանց, ովքեր անցել են աղքատության շեմը:

PIA-ը հատուկ ստեղծված է սոցիալական տարբեր խմբերի աղքատության մակարդակի վրա ծրագրային միջամտության ազդեցությունը գնահատելու համար:

Քանի որ PIA-ը ինչպես քանակական, այնպես էլ որակական մեթոդների կիրառման շնորհիվ հնարավորություն է տալիս բացահայտել ուղղակի եւ անուղղակի, դրական եւ բացասական ազդեցությունները, ապա այս մոտեցումը նույնպես ընդգրկվեց հետազոտական մեթոդների շարքը:

Մեթոդն առանձնանում է իր մանրամասնությամբ եւ նկատի է առնում աղքատության հաղթահարման ոլորտում առկա միջազգային տարբեր համաձայնագրեր եւ չափանիշներ: Այն բավականին ճկուն մեթոդ է: Եվ չնայած ստեղծված է ծրագրերի եւ նախագծերի նախնական գնահատման համար, այդուհանդերձ, այս մեթոդի յուրահատկությունը հնարավորություն է տալիս այն օգտագործել նաեւ իրականացման ընթացքում գտնվող ծրագրերի համար:

DNH մեթոդը ստեղծված է գնահատելու կոնֆլիկտի վրա ծրագրերի նախագծերի եւ ռազմավարության ազդեցությունը՝ հաշվի առնելով դրական եւ բացասական գործոնները:

DNH-ը բացահայտում եւ նվազեցնուն է ցանկացած միջամտության պոտենցիալ բացասականը, մասնատողը եւ հզորացնում՝ պոտենցիալ դրականն ու համախմբողը:

Մեթոդն, ինքնին, ստեղծված չէ սոցիալական ուղղվածության ծրագրերի ազդեցությունը վերլուծելու նպատակով: Սակայն հետազոտության ընթացքում հաջողվեց այն օգտագործել նախագծերի ինտեգրող ազդեցությունը գնահատելու համար, քանի որ գնահատվող երկու ծրագրերն էլ նպատակաուղղված են համայնքային զարգացմանը եւ ինտեգրմանը:

Երրորդ մեթոդը Making a Difference-ն էր:

Making a Difference-ը ստեղծված է բացահայտելու ինչպես առանձին մարդկանց, այնպես էլ համայնքի կյանքում կատարված էական փոփոխությունները:

Այս մոտեցումը ստեղծված է ծրագրի ավարտից հետո ստացված արդյունքները գնահատելու համար, սակայն մեթոդաբանությունը

հնարավորություն է տալիս այն կիրառել նաեւ նախագծի տարբեր փուլերում: Քանի որ երկու ծրագրերն էլ՝ ինչպես Գյումրիում, այնպես էլ Մեծամորում, բնութագրվում են որպես «փոփոխողներ», այսինքն՝ ուղղված են ստեղծված իրավիճակի բարեփոխմանը, ապա Making a Difference-ը հանդիսանում է հնարավորինս առավել իրազեկող մոտեցումներից մեկը: Բացի այդ, այս մեթոդը բավականին ճկուն է մշակութային եւ բնագավառային համատեքստերում:

Բոլոր մեթոդները մանրակրկիտ ուսումնասիրվել են՝ ըստ հետազոտության տրամադրության տակ եղած նյութերի եւ մեթոդիկայի:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են համապատասխան մեթոդների կիսաստանդարտացված ուղեցույցները:

Առավել շատ ժամանակ պահանջեց PIA մեթոդը, քանի որ վերջինս ենթադրում էր ոչ միայն անմիջական հարցումներ անցկացնել շահագրգիռ կողմերի հետ, այլեւ՝ փաստաթղթային խորը վերլուծություն ինչպես իրականացվող ծրագրերի, այնպես էլ համայնքի ու երկրի աղքատության վերլուծության վերաբերյալ: Բացի այդ այս մեթոդը իրականացվում է մատրիցային վերլուծության հիման վրա, ինչը նույնպես ժամանակի մեծ ծախս է պահանջում:

DNH մոտեցումը, ըստ մեթոդաբանության, իրականացվել է երկու օրվա ընթացքում, իսկ Making a Difference-ը՝ մոտ մեկ շաբաթվա եւ ժամանակայի եռումով համընկել է PIA հարցումների հետ:

Ընդհանուր առմամբ, բոլոր աշխատանքները միասին վերցրած, ներառյալ՝ ծանոթացումը մեթոդներին, հավաքված տեղեկությունների վերլուծությունը եւ վավերացումը, ինչպես նաեւ բուն հետազոտությունները տեւել են մոտ մեկ ամիս:

Ընդհանուր հաշվով, յուրաքանչյուր ծրագրի գնահատման ընթացքում, որպես շահագրգիռ կողմ, հետազոտություններին մասնակցել է 80 հարցվող (44-ը՝ Գյումրիում եւ 36-ը՝ Մեծամորում): Ուսումնասիրության համար կատարվել են հետեւյալ որակական տիպի հետազոտություններ.

1. խմբային հարցազրույցներ ծրագրերի աշխատակիցների եւ կամավորների հետ
2. ֆոկուս խմբեր՝ ծրագրի շահառուների հետ
3. անհատական խորացված հարցազրույցներ առանձին շահառուների հետ՝ ուշագրավ դեպքերի նկարագրության համար

4. փորձագիտական հարցազրույցներ ծրագրերի գործընկերների եւ սոցիալական տարբեր ինստիտուտների ներկայացուցիչների հետ:

4. Հետազոտության նպատակը

Հետազոտության նպատակն էր մի կողմից՝ տեղական պայմաններում փորձարկել ACT D Outcome Evaluation and Impact Assessment Toolkit-ի (Եկեղեցիների համատեղ գործողություններ - զարգացման ծրագրեր: Արդյունքների գնահատման եւ ազդեցության ուսումնասիրության գործիքներ) մեթոդաբանությունն ու գնահատման գործիքները՝ Հայաստանյան Կլոր սեղանի (ՀԿՍ) կողմից իրականացվող «Համապարփակ համայնքային ծրագրի» ուսումնասիրությունն ընդունելով իբրեւ ծրագրի ազդեցության գնահատման պիլոտային հետազոտություն, մյուս կողմից՝ իրականացնել ACT D Outcome Evaluation and Impact Assessment toolkit-ի փորձարկում:

Հետազոտության առանձնահատուկ նպատակն էր գնահատել ծրագրերի ազդեցությունը Գյումրի եւ Մեծամոր համայնքների վրա, ուր իրականացվում են այդ ծրագրերը, ինչպես նաեւ բացահայտել հետագա զարգացման ուղիները:

5. Ընթացքը եւ մեթոդաբանությունը

Ինչպես արդեն վերը նշել ենք, հետազոտության ընթացքում կիրառվել է գնահատման երեք մեթոդ կամ մոտեցում՝ PIA, DNH եւ Making a Difference Method:

5.1 DNH մեթոդ

DNH մոտեցման շրջանակներում վերլուծությունը ներառում էր թիվ երկու մոդուլը: Այս մոդուլի էությունն այն է, որ այն դիտարկում է հիմնական կոնֆլիկտային գործոնները եւ համայնքը միավորող ռեսուրսները, այդ թվում.

1. ո՞ր ինստիտուտներն ու ինչպիսի գործողություններ կարող են լինել տարանջատող կամ միավորող

2. ինչպիսի՞ խորհրդանշային կառույցներ (արժեքներ, ավանդույթներ, մշակույթի տարրեր) կարող են կոնֆլիկտներ ծնել կամ ընդհակառակը՝ նպաստել համայնքում համերաշխության հաստատմանը
3. ինչպիսի՞ խմբեր, միություններ կամ առաջնորդներ կարող են կառուցողական կամ ապակառուցողական դեր ունենալ համայնքի կյանքում:

Մոդուլի շրջանակներում վերլուծության անցկացման համար անհրաժեշտ էր խմբային հարցազրույցի եւ ֆոկուս խմբերի մեթոդների կիրառմամբ պատասխանել հետեւյալ հարցերին.

- ☐ ձեր քաղաքում կամ համայնքում ի՞նչը կարելի է համարել լարվածության աղբյուր, ի՞նչն է տարանջատում մարդկանց եւ առիթ դառնում տարաբնույթ կոնֆլիկտների առաջացման համար
- ☐ ի՞նչն է համայնքում միավորում մարդկանց եւ ո՞ր գործոնները կարելի է համարել ինտեգրող, միավորող
- ☐ իրականացվող ծրագրում ի՞նչը կարող է դառնալ միավորող ուժ եւ ի՞նչը, ընդհակառակը, կարող է լարվածություն առաջացնել եւ գործել որպես տարանջատող ուժ
- ☐ ծրագրի ինչպիսի՞ փոփոխություններ առավել արդյունավետորեն կնպաստեն կոնֆլիկտների վերացմանը համայնքում:

Միաժամանակ, առաջին երկու հարցերը նպատակաուղղված են տվյալ համայնքի իրավիճակի լուսաբանմանը եւ օգնում են պատկերացում կազմել այն իրական պայմանների մասին, որոնցում իրականացվում են ծրագրերը: Վերջին երկու հարցերն անուղղակիանորեն վերաբերում են համայնքում կոնֆլիկտային իրավիճակների վրա ծրագրի ունեցած ազդեցության ուսումնասիրությանը:

Պատասխանների հիման վրա կատարվել է վերլուծություն, որի արդյունքները ներկայացված են տվյալ զեկույցի 7-րդ գլխում:

5.2 PIA մեթոդ

PIA մեթոդով ուսումնասիրությունը, համաձայն համապատասխան մեթոդաբանության, ենթադրում էր մատրիցային վերլուծություն:

Մեթոդի առավելություններից մեկն այն է, որ վերջինս իր մեջ միավորում է արդեն գոյություն ունեցող մեթոդներ, նրանց եզրաբանությունը եւ ընթացակարգը: Մոտեցման նորությունն այն է, որ ամբողջ գործընթացը վերլուծության է ենթարկվում հարաբերականորեն պարզ մատրիցաներում:

Վերլուծությունը ներառում է հինգ մոդուլ.

- Մոդուլ 1. ծրագրի եւ աղքատության հաղթահարման ազգային ռազմավարության փոխհարաբերությունների դիտարկում
- Մոդուլ 2. հետազոտություն պարզելու համար՝ ո՞րն է ծրագրի թիրախային խումբը, մարդկանց ինչպիսի՞ խմբեր կամ ինստիտուտներ են ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում ծրագրի իրականացման վրա եւ կամ ենթակա են ազդեցության
- Մոդուլ 3. շահագրգիռ կողմերի վրա ազդեցության ուղիների բացահայտում. PIA-ն հնարավորություն է տալիս հետեւել եւ ի հայտ բերել ծրագրի ազդեցության ուղիները՝ առանձնացնելով այն հիմնականները, ինչպիսիք են ներգործությունը.
  1. գների
  2. զբաղվածության
  3. հարկերի եւ նպաստների
  4. ծառայությունների եւ ապրանքների հասանելիության
  5. իշխանության եւ դրական նախադրյալների վրա
- Մոդուլ 4. Նախագծերում ներգրավված խմբերի հնարավորությունների գնահատում: Այս մոդուլը կենտրոնացած է հինգ խումբ հնարավորությունների վրա, որոնք թույլ են տալիս մարդուն խուսափել աղքատությունից կամ հաղթահարել այն: Յուրաքանչյուր հնարավորություն փոխկապակցված է մյուսների հետ: Տնտեսական համագործակցության եւ զարգացման միջազգային կազմակերպությունը, ունենալով 30 անդամ եւ աշխատանքներ տանելով գլոբալիզացիայի մարտահրավերների եւ աղքատության

հաղթահարման ասպարեզում, առանձնացրել է հետեւյալ հնարավորությունները.

- տնտեսական. կայուն եկամուտ ունենալու հնարավորություն՝ սպառման եւ խնայողության համար
- մարդասիրական. առողջության պահպանման, կրթություն ստանալու, ոչ միայն գոյատեւելու, այլեւ հասարակության մեջ լիարժեք ներգրավվելու համար կացարան ունենալու հնարավորություններ
- քաղաքական. մարդու իրավունքների, ձայնի իրավունքի, հասարակության մեջ ու համայնքում քաղաքականության եւ որոշումների ընդունման վրա ազդելու հնարավորություններ
- սոցիալ-մշակութային. իբրեւ հասարակության լիարժեք անդամ հասարակության սոցիալական եւ մշակութային գործունեությանը մասնակցելու հնարավորություն
- պաշտպանական (անվտանգություն). վտանգներից (այդ թվում նաեւ տարբեր սոցիալական ինստիտուտների բացասական ներգործությունից) պաշտպանված լինելու, տնտեսական ցնցումներին դիմակայելու հնարավորություն

- Մոդուլ 5. կազմակերպության գործունեության եւ աղքատության հաղթահարման ոլորտում եղած միջազգային համաձայնագրերի եւ որոշումների հարաբերակցության վերլուծություն, օրինակ՝ «Հազարամյակի հռչակագրի»:

Այս մոդուլի շրջանակներում վերլուծվում են գնահատվող ծրագրի նպատակները՝ ըստ միջազգայնորեն սահմանված հետեւյալ նպատակների.

- ծայրահեղ աղքատության եւ սովի հաղթահարում
- տարրական կրթության համընդհանուր հասանելիություն
- գենդերային հավասարության եւ կյանքի բոլոր ասպարեզներում կանանց խրախուսման հնարավորություն
- երեխաների մահացության թվի կրճատում
- մայրական առողջության բարելավում
- պայքար ինֆեկցիոն եւ սոցիալապես վտանգավոր հիվանդությունների դեմ, ինչպիսիք են ՁԻԱՀ-ը, մալարիան եւ այլն

- շրջակա կայուն միջավայրի պահպանում
- շրջակա միջավայրի գլոբալ խնդիրների լուծում
- աղքատության հաղթահարման նպատակով տնտեսական աճի ապահովում եւ պայքար հասարակության բեւեռացման դեմ
- բնակչության խոցելի շերտերի պաշտպանություն
- խաղաղության պաշտպանություն, անվտանգություն եւ զինաթափում
- մարդու իրավունքների պաշտպանություն եւ «լավ» կառավարում:

Յուրաքանչյուր մոդուլ քննում է իրականացվող ծրագրի հնարավոր առավելությունները եւ պոտենցիալ վտանգները, ինչպես նաեւ օգնում է բացահայտել տեղեկությունների պակասը:

Բացի այդ, վերլուծությունը հիմք է նախապատրաստում ծրագրի իրականացման մոնիթորինգի համար եւ հնարավորություն է ստեղծում հանձնարարականներ տալ նրանց, ովքեր որոշումներ են ընդունում:

Այս մոտեցման իրականացման համար կիրառվել են ինչպես խմբային հարցումների երկու տիպերը, այնպես էլ անհատական եւ փորձագիտական հետազոտություններ:

Պատասխանների հիման վրա կատարվել է վերլուծություն, որի արդյունքները ներկայացված են տվյալ զեկույցի 7-րդ գլխում:

5.3 Making a Difference մեթոդ

Տվյալ մոտեցման շրջանակներում հարցվողներին առաջարկվում է նշել ծրագրի այն ազդեցությունը, որն իրական փոփոխություն է մտցրել.

- անձնական կյանքում
- համայնքի կյանքում:

Ինչպես արդեն ասվել է վերեւում, այս մեթոդը հիմնականում կոչված է բացահայտելու ծրագրի ազդեցության արդյունքում առաջացած փոփոխությունները, ինչպես կոնկրետ մարդկանց կյանքում, այնպես էլ համայնքի հեռանկարային զարգացումներում: Մեթոդի իրականացման համար անհրաժեշտ էր խմբային հարցումների, ֆոկուս խմբերի, ինչպես նաեւ անհատական եւ փորձագիտական հարցումների միջոցով նկարագրել ծրագրի ազդեցությունը եւ հարցվողների կարծիքների հիման վրա գնահատել, թե որքանով է այն տեւական եւ ինչու:

Այդ նպատակով հարցվողներին առաջարկվեց պատասխանել երեք հիմնական հարցի, որոնք տրվեցին տարբեր զուգորդումներով՝ հարցվող խմբերին եւ անհատներին.

1. Ձեր կյանքում ինչպիսի՞ փոփոխություններ են կապված տվյալ ծրագրի իրականացման հետ (ինչպես՝ դրական, այնպես էլ՝ բացասական): Որքանո՞վ են այդ փոփոխությունները նշանակալից եւ տեւական (հարցը տրվեց շահառուներին եւ համայնքի գործիչներին):
2. Ծրագրի իրականացման հետ կապված ինչպիսի՞ ընդհանուր փոփոխություններ (զարգացում, կենսակերպ) են տեղի ունեցել ձեր համայնքում (ինչպես՝ դրական, այնպես էլ՝ բացասական): Որքանո՞վ են այդ փոփոխությունները նշանակալից եւ տեւական (հարցը տրվեց շահառուներին եւ համայնքի գործիչներին):
3. Որո՞նք են ծրագրի ազդեցությամբ տեղի ունեցած հիմնական փոփոխությունները թիրախային խմբում եւ համայնքում (ինչպես՝ դրական, այնպես էլ՝ բացասական): Որքանո՞վ են այդ փոփոխությունները նշանակալից եւ տեւական (հարցը տրվեց փորձագետներին եւ ծրագրի աշխատողներին):

Բացի այդ, բոլոր մասնակիցներին առաջարկվեց տալ որոշ խորհուրդներ, որոնք կարող են բարելավել ծրագրի գործունեությունը եւ վերջինիս ազդեցությունը դարձնել առավել դրական եւ նշանակալից:

Պատասխանների հիման վրա կատարվել է վերլուծություն, որի արդյունքները ներկայացված են տվյալ զեկույցի 7-րդ գլխում:

6. Շահագրգիռ կողմերը եւ հարցվողները

Հետազոտությանը մասնակցել են հարցվողների հետեւյալ խմբերը.

1. ծառայությունների շահառուներ՝ ծրագրի ազդեցությունն իրենց վրա կրող թիրախային խմբի ներկայացուցիչներ եւ նրանց ընտանիքի անդամներ
2. համայնքային գործիչներ եւ շահագրգիռ կողմեր
3. համագործակցող կազմակերպությունների՝ տարբեր սոցիալական ինստիտուտների (եկեղեցի, դպրոց, պոլիկլինիկաներ եւ հիվանդանոցներ, ոստիկանություն եւ այլն) ներկայացուցիչներ

4. տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ
5. այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ
6. փորձագետներ, մասնագետներ
7. ծրագրերի աշխատակիցներ եւ ղեկավարներ
8. կամավորներ:

Ինչպես արդեն նշվել է, հետազոտությանը մասնակցել է 80 մարդ: Մասնակիցների թիվը որոշվել էր ըստ որակական հետազոտություններում մասնակիցների ներգրավման համընդհանուր կանոնների՝ հաշվի առնելով նաեւ շահագրգիռ կողմերի եւ ծրագրի աշխատակիցների քանակը:

7. Հետազոտության արդյունքները. ծրագրերի ազդեցության գնահատում

7.1 DNA մեթոդ

Գյումրիի սոցիալ-կրթական կենտրոն

Հարցվողներին առաջարկվում էր պատասխանել 5-րդ գլխի 5.1 կետում ներկայացված հարցերին: Առանձնացվել էին համայնքը մասնատող եւ կոնֆլիկտներ ծնող հետեւյալ գործոնները.

- ☐ տնտեսական շերտավորում եւ բեւեռացում
- ☐ քաղաքական շերտավորում եւ կոռուպցիա
- ☐ անտարբերություն միմյանց եւ նախանձ ուրիշների հաջողությունների նկատմամբ
- ☐ պետական իշխանությունների նկատմամբ անվստահություն եւ մարդու իրավունքների խախտում
- ☐ անգործունության հոգեբանություն, որ ձեւավորվել է երկրաշարժից հետո եւ բնակչությանը դրել կախվածության մեջ տարբեր տեսակի օգնություններից եւ աջակցություններից
- ☐ ավանդական արժեքների քայքայում եւ նրանց փոխարինումը նորերով՝ հաճախ քրեական սուբկուլտուրայի տարրերով:

Հարցվողները նշում են, որ փարանջափող գործոնները խիստ բազմազան են: Սակայն առաջին հերթին նշում են այն ինստիտուտները, ինչպիսին են տեղական ինքնակառավարման մարմինները: Մասնավորապես, գլխավոր փարանջափող գործոնը քաղաքապետի պաշտոնի շուրջ ծավալվող քաղաքական խաղերն են, որ համայնքը բաժանում է 3 խմբի՝ գործող իշխանության կողմնակիցների, դրա հակառակորդների եւ «չեզոք» խմբի: Այս երեք խմբերը քաղաքի համար ամենադժվար իրավիճակներում անգամ ի վիճակի չեն համախմբվել:

«Ի՞նչն է համախմբում համայնքը» հարցին տրվել են հետեւյալ պատասխանները.

- ավանդույթները եւ սերը դրանց հանդեպ
- լավատեսությունն ու գյումրեցուն հատուկ հումորը
- Եկեղեցին. հատկապես նշվել է անձամբ թեմական առաջնորդի համախմբող դերը
- թշնամու կերպարը՝ չինովնիկները, որոնցից գալիս եւ պարտադրվում է սոցիալական անարդարությունը:

Ցավոք, համախմբող գործոնների ցանկը զգալիորեն կարճ է փարանջափող գործոնների ցանկից, ինչն ինքնին խոսուն է: Այստեղ շատ կարեւոր էր հասկանալ, թե որոնք են ծրագրի համախմբող ռեսուրսները եւ թե ինչ դեր կարող է ծրագիրը խաղալ կոնֆլիկտի հաղթահարման գործում:

Հարցվողների ճնշող մեծամասնությունը ընդունեց ծրագրի համախմբող դերը:

- Բոլոր հարցվողները նշում են, որ կենտրոնն այսօր մի օազիս է, որտեղ մարդը կարող է խոսքի ազատության մթնոլորտում անկեղծ ժամանակ անցկացնել, բարձորակ ծառայություններ ստանալ եւ առավելագույնս ինքնաարտահայտվել:
- Հատկապես նշվում է կենտրոնի դերը իբրեւ մի վայրի, որն իր շուրջն է համախմբում քաղաքի երիտասարդությանը, որը հետաքրքիր եւ բովանդակալից ժամանակ անցկացնելու հնարավորություն է ընձեռում, երիտասարդ սերնդին հետ է պահում «փողոցային խմբավորումներից» եւ իրական այլընտրանք է հանցավոր-բակային սուբկուլտուրային: Վերջինս հարցվողների կողմից դիտարկվում է որպես առավել կոնֆլիկտածին գործոն:

Աշխատակիցների հետ խմբային հարցազրույցի ժամանակ մի դեպք ներկայացվեց: Տասնվեցամյա մի երիտասարդ, որը ներգրավված էր երիտասարդական հանցախմբի մեջ եւ հաշվառված էր ոստիկանությունում, սկսեց այցելել կենտրոն եւ կարողացավ, կենտրոնում այլ երիտասարդների հետ կապեր ստեղծելով, ինչպես նաեւ կենտրոնի աշխատակիցների օգնությամբ, հեռանալ հանցավոր խմբից: Կենտրոնը երիտասարդի երաշխավորը դարձավ, ինչն էլ նրան օգնեց դուրս գալ ոստիկանության հաշվառումից: Բացի այդ, մասնագիտական համապատասխան դասընթացներ անցնելուց հետո, երիտասարդը կենտրոնում ոսկերչի մասնագիտություն ձեռք բերեց եւ այժմ կարող է ապահովել իր ընտանիքը: Երիտասարդը սերտ կապերի մեջ է կենտրոնի եւ Եկեղեցու հետ:

Նկարագրված դեպքը օրինակ է ոչ միայն նրա, թե ինչպես կարող են հաղթահարվել դեզինտեգրող գործոնները, այլեւ այն բանի, թե հատկապես ինչպես է ծրագիրն ազդում առանձին անհատի վրա (Making a Difference մեթոդ):

Բացի վերը նշվածներից, հարցվողներն հայտնել են նաեւ այսպիսի կարծիքներ.

- կենտրոնը համախմբում է տարբեր շերտերի եւ տարբեր տարիքային խմբերի մարդկանց՝ դառնալով միջսերնդային եւ գենդերային ինտեգրացիայի միակ փաստացի վայրը: Այս առումով մեծ նշանակություն ունի «Հերոնտոս» տարեցների ակումբը, որը ակումբի մասնակիցների խոսքերով՝ առանձնահատուկ մի հավաքատեղի է, որտեղ տարեցները ոչ թե «մարդասիրական օգնության» պասիվ ստացողներ են, այլ՝ տարբեր միջոցառումների, քննարկումների եւ ընդհանրապես հաղորդակցման գործընթացների լիարժեք մասնակիցներ:
- կենտրոնը հումանիստական մտածողությամբ մարդկանց միավորող մի օղակ է, ուր ստեղծվում է քրիստոնեական աշխարհընկալման վրա հիմնված կյանքի յուրահատուկ մշակույթ, որ զարգանում է հոգեւոր ծառայությունների մատուցման, լուսավորչական գործունեություն իրականացնելու միջոցով («Աստվածաշունչը եւ մենք» հանդիպումների շարք, ուխտագնացություններ եւ Եկեղեցու ներկայացուցիչների հետ հանդիպումներ)
- առավել նշանակալի է կենտրոնի հաղորդակցական դերը, որի արտահայտություններից է կամավորների ակտիվ ներգրավման մակարդակը:

Փաստորեն, կենտրոնը միավորում է բնակչության չեզոք մասին եւ հնարավորություն է տալիս Եկեղեցու կողմնակիցներին՝ իբրեւ սոցիալական ինստիտուտի, համախմբվել նրա շուրջը:

Հարցվողները կենտրոնում տեսնում են բանակցային հնարավորություն եւ հուսով են, որ հենց կենտրոնի աջակցության շնորհիվ կկարողանան կլոր սեղանի շուրջ քննարկել համայնքի խնդիրները: Կարծում են նաեւ, որ ծրագիրը պետք է առավել ակտիվ ներգրավում ունենա քաղաքի բարոյա-մշակութային համախմբան գործում՝ սեփական ռեսուրսների օգտագործմամբ հնարավորություն ստեղծելով երկխոսության, համայնքային խնդիրները ազատորեն քննարկելու եւ համայնքային ռեսուրսները միավորելու համար:

Մեծամորի համայնքային կենտրոն

Հարցվողների խոսքերով՝ Մեծամորում հիմնական բաժանող գործոններն են.

- սոցիալական լարվածությունը՝ կապված ծայրահեղ աղքատության եւ գործազրկության հետ
- համայնքում բավականին մեծ թվով խոտորված եւ հանցավոր վարք ունեցող մարդկանց առկայությունը
- համայնքում մշակութային կյանքի բացակայությունը
- մեծ թվով վերաբնակիչների առկայությունը եւ նրանց անբավարար ինտեգրումը համայնքին
- բնակչության, հատկապես երիտասարդության համար անհատական աճի հնարավորության բացակայությունը
- անհատական ներփակվածությունը, սեւեռվածությունը սեփական խնդիրների վրա:

Որպես միավարող գործոններ նշվում են.

- ուրիշների հանդեպ համբերատարությունը
- ավանդույթները եւ հայկական ավանդական արժեքները
- քիչ թե շատ քաղաքական կայունությունը
- եկեղեցին եւ նրա շուրջ համայնքային կյանքը

- կյանքի համանման պայմանները եւ ոչ այնքան արտահայտված շերտավորումը (այն դեպքն է, երբ համանման պայմանների առկայությունը ոչ թե տարանջատում է, այլ՝ հակառակը)
- կենտրոնի առկայությունը համայնքում:

Կենտրոնի համախմբող դերը անվիճելիորեն ընդունվում է հարցվող բոլոր խմբերի կողմից:

Հարկ է նշել, որ ինչպես տեղական իշխանությունների, այնպես էլ ծրագրի հետ համագործակցող զանազան սոցիալական ինստիտուտների ներկայացուցիչները ընդգծում են կենտրոնի ինտեգրող դերը: Ընդ որում, նշվում են երկու ուղղություններ. մի կողմից՝ ընտանիքների ինտեգրացիա, ընտանեկան կոնֆլիկտների եւ բռնության հաղթահարում եւ մյուս կողմից՝ համայնքի համախմբումը սեփական խնդիրների լուծման շուրջ: Հարցվողների խոսքերով՝ եթե նախկինում կենտրոնը դիտվում էր որպես աղքատների եւ անօթեւանների կենտրոն, որոնցից պետք էր հեռու մնալ, ապա այժմ այն ավելի շատ համայնքն ակտիվացնող կենտրոն է: Այս փոփոխությունը տեղի ունեցավ ծրագրում համայնքի զարգացման տարբեր ներմուծելու եւ աշխատանքի նկատմամբ համայնքային մոտեցումն ակտիվացնելու շնորհիվ, որն առաջարկվեց Հայաստանյան Կլոր սեղանի կողմից:

Մասնավորապես, հարցվողները նշում են կենտրոնի ակտիվ համագործակցությունը համայնքի գրեթե բոլոր պետական կառույցների հետ (ոստիկանություն, տեղական ինքնակառավարման մարմիններ, պոլիկլինիկա, դպրոցներ եւ այլն) եւ ուժերի համախմբումը սոցիալական ծառայություններ ստացողների խնդիրները լուծելու, նրանց ծանր վիճակը հաղթահարելու գործում: Վերջինիս նպատակով կենտրոնի մասնագետները, հատկապես սոցիալական աշխատողները, մշտական կապի մեջ են համայնքի բոլոր կարեւոր կառույցների հետ:

Կենտրոնում համայնքի ակտիվ անդամների հետ անցկացվել է հանդիպումների շարք, որոնց ընթացքում իրականացվել են համայնքն ակտիվացնելու վերաբերյալ թրեյնինգներ եւ համայնքի առավել հրատապ հիմնախնդիրների շուրջ քննարկումներ՝ առանձնացնելով դրանց լուծման ռազմավարական հիմնական քայլերը: Բացի այդ հանդիպումների ընթացքում քննարկվել են կենտրոնի զարգացման հեռանկարները համայնքային աշխատանքը զարգացնելու նպատակով: Այդ բոլորը հաշվի են առնվել եւ ըստ այդմ էլ շարունակվում է ծրագրի գործունեությունը:

Առանձին նշվում է նաեւ կենտրոնի դերը եկեղեցու եւ համայնքի փոխինտեգրման գործում: Քանի որ Մեծամորի Սուրբ Ղազար եկեղեցու քահանաները սպասարկում են եւս վեց համայնք, քաղաքի բնակիչները հաճախ նրանց հետ հանդիպելու հնարավորություն չեն ունենում: Այս նկատառումով քահանաների ուղղակի ներգրավումը կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների մեջ համայնքայինների հետ նրանց շփումը դարձնում է ավելի դյուրին եւ մշտական:

Բացի այդ, հարցվողները նշում են փոխօգնության յուրահատուկ ցանցի ստեղծման մասին, որը ձեւավորվել է կենտրոն հաճախող երեխաների ընտանիքներից եւ որոնց հետ աշխատում է կենտրոնը: Ընտանիքներն աջակցում են միմյանց, ծնողների միջեւ հաստատվում են ընկերական հարաբերություններ: Համատեղ ուժերով աշխատանք փնտրելու համար նրանք նույնիսկ խմբեր են կազմում, օգնում են միմյանց՝ ստեղծելով «աշխատանքային խմբեր» եւ այդպես լուծելով սեզոնային զբաղվածության հարցը: Դրան զուգահեռ երեւան է գալիս զուտ մարդկային (էմոցիոնալ) փոխօգնություն, օգնություն երեխաների խնամքի գործում:

Հարցվողների մեծամասնությունը պատասխանում է, որ կենտրոնի քաղաքական չեզոքությունը եւ աջակցություն ցուցաբերելու հարցում կենտրոնի աշխատակիցների պատրաստակամությունը մեծ վստահություն է առաջացնում, եւ որ կենտրոն կարելի է այցելել ցանկացած խնդրով:

Կենտրոնի համախմբող դերն արտահայտվում է նաեւ շահառուների ընտանիքների եւ կենտրոնի ծառայություններից օգտվող տարեց շահառուների միջեւ միջսերնդային կապերի ստեղծմամբ:

Համայնքը համախմբող մեկ այլ տարր են հանդիսանում մանկական ստեղծագործության համար ստեղծված հնարավորությունները եւ, մասնավորապես, կենտրոնում երգչախմբի եւ տիկնիկային թատրոնի առկայությունը, որտեղ ամեն ինչ արվում է հենց իրենց՝ երեխաների ուժերով:

.....

Կենտրոնի համախմբող դերի հիանալի օրինակ է «Փալանչո» տիկնիկային թատրոնը, որը միաժամանակ նպաստում է համայնքի մշակութային զարգացմանը եւ փոխօգնության ամրապնդմանը: Թատրոնը ստեղծվել է կենտրոնում եւ գործում է շահառուների երեխաների ուժերով՝ կենտրոնի աշխատակիցների ղեկավարությամբ: Երեխաներն իրենք են տիկնիկներ պատրաստում, դեկորացիաներ անում եւ խաղում թատրոնում: Այս առումով հատուկ ուշադրության է արժանի «Երեխաները՝ երեխաներին» ակցիան, որի ընթացքում թատրոնի մասնակիցները ներկայացումներով հանդես եկան իրենց հասակակիցների առջեւ: Արդեն իսկ հիշատակած մշակութային աղքատիկ կյանքի պայմաններում՝ այս գործունեությունը կենտրոնը դարձնում է մշակութային միասնության անփոխարինելի վայր, որը միավորում է ինչպես երեխաներին եւ ծնողներին, այնպես էլ՝ շահառուներին համայնքի մնացած անդամների հետ՝ զարգացնելով ինքնօգնության արժեքներ: «Փալանչո» թատրոնը բարեգործական ներկայացումներով ելույթ է ունենում նաեւ այլ քաղաքներում եւ գյուղերում՝ դառնալով շահառուների ակտիվացման ուշագրավ օրինակ:

.....

Այս դեպքում գլխավոր վտանգն այն է, որ կենտրոնը երեխաների իրավունքների պաշտպանը հանդիսանալով, կարող է պոտենցիալ լարվածության աղբյուր դառնալ նրանց համար, ովքեր բռնություն են կիրառում ընտանիքներում: Ծայրահեղ դեպքում՝ երեխայի իրավունքների պաշտպանությունը կարող է հանգեցնել ընտանիքի բաժանման: Սակայն առ այսօր գրանցվել է միայն մեկ այդպիսի դեպք, որը կապված է կենտրոնի մասնակցությամբ՝ երեխաների կյանքին եւ առողջությանը սպառնացող վտանգի կանխարգելման հետ:

Միայն այն հանգամանքը, որ կենտրոնը միակն է քաղաքում իր տեսակի մեջ, նրա համայնքային ազդեցությունը ավելի նշանակալի է դարձնում: Կենտրոնի ունեցած հսկայական համախմբող ազդեցությունը պայմանավորում է նաեւ Մեծամորի՝ փոքր քաղաք լինելու եւ սակավաթիվ բնակչություն ունենալու հանգամանքով:

7.2 PIA մեթոդ

Գյումրիի սոցիալ-կրթական կենտրոն

Գյումրիի ծրագիրը վառ արտահայտված մշակութա-կրթական բնույթի ծրագիր է եւ ըստ էության, աղքատության հաղթահարման խնդրում մեծ մասամբ ազդում է աղքատության ոչ տնտեսական գործոնների վրա, ինչպիսիք են, օրինակ՝ ըստ հետաքրքրությունների ակումբների մատչելիությունը, անձը զարգացնող հավելյալ հմտությունների ձեռքբերումը: Սակայն ծրագիրը նոր է զարգացնում իր սոցիալական բաղադրիչը, ինչը դեռ համակարգման եւ հարստացման կարիք ունի:

Այսօր ծրագրի հիմնական գործունեությունը սոցիալական ոլորտում տվյալների բազայի ստեղծումն է՝ ընտանիքների կարիքավորությունը եւ խոցելիությունը որոշելու նպատակով, ինչպես նաեւ ընտանիքներին հումանիտար օգնության տրամադրումը: Կենտրոնում իրականացվող սոցիալական աշխատանքը, առայժմ, միայն ուղղորդում է: Միաժամանակ, համայնքի անդամների եւ շահառուների կարծիքով՝ կենտրոնը, իրապես, հսկայական եւ պիտանի աշխատանք է կատարում՝ լրացնելով կրթական ծառայությունների եւ քաղաքի մշակութային կյանքի բացերը:

Մոդուլային վերլուծության տեսանկյունից՝ ծրագիրը լիովին համապատասխանում է աղքատության հաղթահարման ազգային ռազմավարության նպատակներին՝ կրթական ծառայությունների եւ հնարավորությունների ընդլայնման, բարելավման հարցերում: Բացի դրանից, այն մեծ դեր է խաղում շահառուների հմտությունների ու կարողությունների ձեւավորման գործում, որոնք հետագայում կարող են օգնել աղքատությունից խուսափելու կամ այն հաղթահարելու խնդրում: Այսինքն՝ ծրագիրն անուղղակի կերպով ազդում է տնտեսական հնարավորությունների զարգացման վրա եւ ուղղակի կերպով՝ մարդասիրական ու սոցիալ-մշակութային հնարավորությունների վրա (մոդուլ 4): Դրանից բացի, ունենալով հատուկ գենդերային

բաղադրատարր, ծրագիրը դրական ազդեցություն է ունենում գենդերային հավասարության հասնելու եւ կյանքի տարբեր ոլորտներում կանանց խրախուսման վրա: Միաժամանակ, սեմինարների եւ թրեյնինգների միջոցով, որ հիմնականում կազմակերպվում են երիտասարդության համար, ծրագիրը կրթական գործունեություն է իրականացնում նաեւ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ Էկոլոգիան, վտանգավոր հիվանդություններից պաշտպանությունը, կոնֆլիկտների հաղթահարումը եւ խաղաղության հաստատումը (մոդուլ 5): Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ աղքատության հաղթահարման առումով Գյումրիի ծրագիրը գործում է ավելի շատ միջնորդավորված՝ հիմնականում ոչ տնտեսական գործոնների միջոցով:

Մեծամորի համայնքային կենտրոն

Ըստ կատարված վերլուծությունների՝ Մեծամորում իրականացվող ծրագիրն իր բոլոր պարամետրերով հսկայական ազդեցություն ունի քաղաքի աղքատության հաղթահարման վրա: Ընդ որում՝ այն անմիջականորեն ազդում է աղքատության բացասական ազդեցությունն ուժեղացնող՝ ինչպես տնտեսական, այնպես էլ ոչ տնտեսական գործոնների վրա:

Սկզբունքորեն, քանի որ այս ծրագրի հիմքում ընկած է աղքատներին եւ բնակչության անպաշտպան շերտերին ծառայությունների մատուցումը, նման արդյունքները լիովին սպասելի են եւ վկայում են ծրագրի հիմնական նպատակներին հասնելու մասին:

Ի մի բերելով մոդուլային վերլուծության արդյունքները՝ ստացվում է հետեւյալ պատկերը.

մոդուլ	մոդուլի բովանդակությունը	ծրագրի ազդեցությունը
մոդուլ 1.	ծրագրի եւ աղքատության հաղթահարման ազգային ռազմավարության փոխհարաբերությունների դիտարկում	ծրագրի նպատակները, խնդիրները, կառուցվածքը եւ ծառայությունները լիովին համապատասխանում են ազգային ծրագրին եւ, ի հավելումն դրա, շեշտադրություն են կատարումշահերի պաշտպանության վրա
մոդուլ 2.	հետազոտություն պարզելու համար՝ ո՞րն է ծրագրի թիրախային խումբը, մարդկանց ինչպիսի՞ խմբեր կամ ինստիտուտներ են ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում ծրագրի իրականացման վրա եւ կամ ենթակա են ազդեցության	ծրագրում ներգրավված են ինչպես ընտանիքներ եւ առանձին սոցիալական խմբեր՝ երեխաներ, տարեցներ, այնպես էլ ողջ համայնքը՝ որպես միասնական շահառու խնդիրների հաղթահարման եւ ինքնաակտիվացման համատեքստում: Առկա է ներհամայնքային եւ արտահամայնքային համագործակցության լայն ցանց:

	շահագրգիռ կողմերի վրա ազդեցության ուղիների բացահայտում. PIA-ն հնարավորություն է տալիս հետեւել եւ ի հայտ բերել ծրագրի ազդեցության ուղիները՝ առանձնացնելով այն հիմնականները, ինչպիսիք են ներգործությունը.	Ծրագրի դրական ազդեցությունը գործնականորեն շոշափելի է ազդեցության բոլոր ուղիներում. զբաղվածության եւ գործազրկության հաղթահարում, նպաստ-ների տրամադրում եւ մարդասիրական օգնություն, տարբեր ծառայությունների հասանելիությունը եւ դրանց նկատմամբ իրավունքների իրականացումը, մասնավորապես՝
Մոդուլ 3.	1. գների 2. զբաղվածության 3. հարկերի եւ նպաստների 4. ծառայությունների եւ ապրանքների հասանելիության 5. իշխանության եւ մասնակցության վրա	1. կրթություն (դպրոցական համակարգից դուրս մնացած երեխաների վերադարձ եւ ինտեգրացիա, դպրոցում երեխայի իրավունքների պաշտպանություն, համագործակցություն վարքային փոփոխությունների նպատակով, օգնություն տնային աշխատանքներում եւ այլն) 2.առողջապահություն (պոլիկլինիկական ծառայություններից օգտվելը, առողջության իրավունքների պաշտպանություն, միջոցների եւ ֆոնդերի հայթայթում անհետաձգելի բժշկական միջամտության համար եւ այլն) 3. իրավաբանական ծառայությունների տրամադրում, սոցիալական շահերի պաշտպանություն (կանանց, տարեցների, երեխաների, ընտանիքի իրավունքների պաշտպանություն և այլն) 4.համայնքային խնդիրների քննարկումներին շահառուների մասնակցության ապահովում՝ ժողովրդավարական գործընթացների զարգացմանը եւ մակրոմակարդակում որոշումների ընդունմանը մասնակից լինելու նպատակով:

Մոդուլ 4.	Նախագծի մեջ ներգրավված խմբերի հնարավորությունների գնահատում. մոդուլը կենտրոնացած է հինգ խումբ հնարավորությունների վրա: Տնտեսական համագործակցության եւ զարգացման միջազգային կազմակերպությունը, ունենալով 30 անդամ եւ աշխատելով գլոբալիզացիայի մարտահրավերների եւ աղքատության հաղթահարման ոլորտում, առանձնացրել է հետեւյալ հնարավորությունները. • տնտեսական • մարդասիրական • քաղաքական • սոցիալ-մշակութային պաշտպանական (մանրամասն նկարագրությունը տես 5.2 կետում)	Հնարավորությունների բոլոր հինգ խմբերն էլ կրում են ծրագրի ակնառու եւ նշանակալի ազդեցությունը, ինչը ծրագրի ռազմավարության եւ նպատակների անմիջական արտացոլումն է:

Մոդուլ 5.	կազմակերպության գործունեության եւ աղքատության հաղթահարման ոլորտում եղած միջազգային համաձայնագրերի եւ որոշումների հարաբերակցության վերլուծություն, օրինակ՝ «Հազարամյակի հռչակագրի» Այս մոդուլի շրջանակներում վերլուծվում են գնահատվող ծրագրի նպատակները՝ ըստ միջազգայնորեն սահմանված հետեւյալ նպատակների. ծայրահեղ աղքատության եւ սովի հաղթահարում տարրական կրթության համընդհանուր հասանելիություն գենդերային հավասարության եւ կյանքի բոլոր ասպարեզներում կանանց խրախուսման հնարավորություն երեխաների մահացության թվի կրճատում մայրական առողջության բարելավում պայքար ինֆեկցիոն եւ սոցիալապես վտանգավոր հիվանդությունների դեմ, ինչպիսիք են ՁԻԱՀ-ը, մալարիան եւ այլն շրջակա կայուն միջավայրի պահպանում շրջակա միջավայրի գլոբալ խնդիրների լուծում աղքատության հաղթահարման նպատակով տնտեսական աճի ապահովում եւ պայքար հասարակության բեւեռացման դեմ բնակչության խոցելի շերտերի պաշտպանություն խաղաղության պաշտպանություն, անվտանգություն եւ զինաթափում մարդու իրավունքների պաշտպանություն եւ «լավ» կառավարում	Ծրագիրը միարժեքորեն հաշվի է առնում եւ գործում է տվյալ մոդուլում ներկայացված գրեթե բոլոր նպատակների (ներառյալ՝ էկոլոգիական) իրականացման ուղղությամբ: Ծրագրում ոչ բավարար ընդգրկում ունեցող տարր է համարվում միայն «Խաղաղության պաշտպանություն, անվտանգություն եւ զինաթափում»-ը

Ծրագրի ռիսկերը կապված էին նրա իրականցման նախնական փուլերի՝ համագործակցության հաստատման եւ համայնքի ներգրավման հետ: Այսօրվա դրությամբ ռիսկերը նվազագույնի են հասցվել, բացառությամբ այն ռիսկերի, որոնք կապված են մասնագետների, հատկապես սոցիալական աշխատողների գերծանրաբեռնվածության հետ, որոնց պահանջարկը գերազանցում է նրանց փաստացի քանակը՝ հանգեցնելով մասնագետների գերծանրաբեռնվածության: Բացի այդ, կենտրոնի շենքային պայմանները նույնպես չեն բավարարում համայնքի պահանջներին եւ ընդլայնման կարիք ունեն:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ փվյալ մեթոդը բացահայտեց Մեծամորի կենտրոնի գործունեության մեջ արտացոլված դրական արդյունքները:

7.3 Making a Difference մեթոդ

Գյումրիի սոցիալ-կրթական կենտրոն

Հիմնական փոփոխությունները, որ Գյումրիի կենտրոնը մտցրել է իր շահառուների եւ համայնքի կյանքում, հաղորդակցման, կրթական եւ մշակութային հնարավորությունների ընդլայնումն է եւ փոխգործակցության լայն ցանցի ստեղծումը, որը շատերի համար նոր հմտությունների, գիտելիքների ձեռք բերման, համախոհներ գտնելու եւ սեփական սոցիալական ցանցերը ստեղծելու միակ հնարավորությունն է: Բացի այդ, հարցվողների կարծիքով, կենտրոնը յուրահատուկ մշակույթի ստեղծող ու կրող է, որը «հայրենասիրական եւ քրիստոնեական արժեքները համատեղում է անձի մտավոր զարգացման եւ նրա կայացման հետ»:

Ինչպես արդեն նշվել է կոնկրետ օրինակի վրա (7.1 կետ), կենտրոնի ազդեցությունը անհատական մակարդակում նույնքան արտահայտված է, որքան համայնքայինում:

Հարցվողների մեծամասնության կարծիքով՝ կենտրոնը, իրապես, Գյումրիում երիտասարդական կյանքի կենտրոն է հանդիսանում: Բացի այդ, կենտրոնը մեծ դեր է խաղում համայնքի եւ Եկեղեցու ինտեգրման գործում՝ ստեղծելով փոխգործակցության համընդունելի եւ հետաքրքիր ձեւեր, «ակտիվացնելով ավանդույթների եւ նորարարությունների միջեւ երկխոսությունը»:

Հարցվողների կարծիքով, «կենտրոնը մի կղզի է, որտեղ կարելի է ազատ լինել, հետաքրքիր ինչ-որ բան իմանալ, ինքդ քեզ վրա աշխատել, աջակցություն ստանալ եւ հետաքրքիր մարդկանց հանդիպել», ինչպես նաեւ՝ «ինչ-որ բան տալ, գտնել կյանքի հետաքրքրություններ, ինչ-որ նշանակալի բանի հաղորդակիցը դառնալ»: Ինչպես արդեն վերը նշվել է, կենտրոնը նշանակալի դեր է խաղում ինչպես համայնքի, այնպես էլ առանձին հարցվողների կյանքում:

Հետազոտության արդյունքների համաձայն՝ կենտրոնը մեծ դեր է խաղում քաղաքում հումանիստական մտածելակերպի եւ կամավորականության զարգացման գործում, քաղաք, «որտեղ շատերը մտածում են միայն սեփական եսի մասին, հատկապես՝ ղեկավարությունը»:

Այս համատեքստում շատ հետաքրքիր է «Հայկական Զմեռ պապ» նախագիծը: Կենտրոնի նախաձեռնությամբ ստեղծվել է հայկական Զմեռ պապի նստավայր, որը գտնվում է հանրապետության ամենահյուսիսային կետում՝ Ցուրտավ սարի մոտ: 2010 թվականի դեկտեմբերին հայկական Զմեռ պապն առաջին անգամ Եղնաջյուրի ճամբարում կհյուրընկալի հանրապետության տարբեր բնակավայրերի երեխաների: Մշակութային այս նախագիծը կարող է վիթխարի ազդեցություն ունենալ զբոսաշրջության զարգացման եւ համապատասխանաբար՝ համայնքային ռեսուրսների զարգացման վրա: Այն թույլ կտա «Հայկական Զմեռ պապին» վերաբերող ձեռնարկատիրական համապատասխան գործունեություն ծավալել մարզում՝ ստեղծելով ինքնատիպ մշակութային ֆենոմեն՝ վերառման մեծ պոտենցիալով:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ կենտրոնը հանդիսանում է փոխօգնության մշակույթի տարածող՝ միաժամանակ ծավալելով ազգային արժեքների պահպանմանն ուղղված գործունեություն:

Հարցվողների մեծ մասը ծրագրի նման ազդեցությունը համարում է խիստ կայուն, քանի որ այն նախ եւ առաջ վերաբերում է նոր սերնդի սոցիալականացմանը եւ ունակ է մշակութային վերարտադրության:

Հարցվողների կարծիքով՝ ծրագրի ձեւափոխիչ ազդեցության հզորացման համար անհրաժեշտ է սոցիալական բաղադրիչի զգալի ընդլայնում սոցիալական ծառայությունների ցանկի համապատասխան ընդլայնման եւ այդ ոլորտի աշխատակիցների քանակի ավելացման հետ մեկտեղ:

Մեծամորի համայնքային կենտրոն

Հարցվողների կարծիքով՝ կենտրոնի ազդեցությունը եւ նրա կողմից իրականացված հիմնական փոփոխությունները կարելի է դասակարգել հետեւյալ կերպ.

- համայնքի զարգացում եւ ակտիվացում՝ մակրոմակարդակ
- շահառուների սոցիալ-տնտեսական եւ բարոյահոգեբանական վիճակի փոփոխություն՝ միկրոմակարդակ:

Հարցվողների կարծիքով՝ կենտրոնը մեծ ազդեցություն ունի քաղաքացիական եւ իրավական ինքնագիտակցության զարգացման վրա եւ համապատասխան մշակույթ է տարածում: Կարելի է ասել, որ կազմակերպությունը երկու դեր է կատարում.

- էքսպլիցիտ՝ ծառայությունների մատուցում
- իմպլիցիտ՝ իրավունքների իրականացում եւ համայնքի միավորում:

Կենտրոնը, ինչպես Գյումրիում, հանդես է գալիս իբրեւ դրական արժեքների կողմնորոշիչ եւ այդ արժեքների տարածող: Այս գործոնը ուղղակիորեն ազդում է շահառուների բարոյահոգեբանական վիճակի վրա, որոնց խոսքերով՝ «հենց այստեղ մենք հիշեցինք, թե ինչ է մարդկային արժանապատվությունը, հենց այստեղ են մեզ եւ մեր երեխաներին վերաբերվում ինչպես մարդկանց»:

Հարցվողների խոսքերով՝ այսպիսի մոտեցումը ազդում է կյանքի նկատմամբ շահառուների ունեցած վերաբերմունքի վրա, ինչն առաջին հերթին պայմանավորված է քրիստոնեական արժեքների զարգացմամբ, ինչն էլ ազդում է աշխարհաընկալման եւ կենսակեպի փոփոխության վրա:

Վառ օրինակ կարող է հանդիսանալ 48-ամյա միայնակ մոր պատմությունը, որն ապրում էր որդու եւ հիվանդ քրոջ հետ, ում երկար տարիներ խնամում էր: Ընտանիքը ապրում էր ծայրահեղ աղքատության պայմաններում՝ չունենալով սեփական կացարան, ապրելով ժամանակավոր շինության մեջ՝ առանց անհրաժեշտ հագուստի, կահույքի, այլ կենցաղային իրերի: Երեխան չորս տարեկանից միայնակ նստում էր տանը մահճակալին գամված կնոջ մոտ, քանի որ մայրը ստիպված էր գնալ ժամանակավոր աշխատանքների: Աղքատության եւ անհրաժեշտ իրեր գնելու հնարավորություն չունենալու պատճառով տղան հաճախել էր միայն

առաջին դասարան, այնուհետեւ ստիպված էր տանը մնալ: Երեխայի մեկուսացումը հանգեցրել էր լուրջ հաղորդակցական խնդիրների առաջացման, քանի որ տասներկու տարեկանում նա զգալիորեն հետ էր մնում իր հասակակիցներից՝ ունենալով յոթ տարեկանի գիտելիքներ եւ մտավոր զարգացում: Կենտրոնի աշխատանքներում ներգրավվելուց հետո տղան ակտիվորեն սկսեց հաճախել լրացուցիչ դասընթացների: Նրա հետ վերականգնողական աշխատանք էին տանում սոցիալական աշխատողը, հոգեբանը եւ մանկավարժները: Արդյունքում՝ երեխան հիմնականում հաղթահարեց հաղորդակցման խնդիրները եւ պատրաստ էր դպրոց վերադառնալուն: Մեկ տարի հաճախելով գիշերօթիկ դպրոց՝ կենտրոնի աշխատակիցների աջակցությամբ եւ գիշերօթիկ դպրոցի աշխատակիցների համագործակցությամբ, տղան քննություններ հանձնեց իր տարիքին համապատասխան դասարան տեղափոխվելու համար: Երեխային դպրոց վերադարձնելու եւ նրա իրավունքները վերականգնելու համար ծրագիրը ակտիվորեն համագործակցել է քաղաքապետարանի, հանրակրթական եւ երեխաների պաշտպանությամբ զբաղվող կառույցների հետ: Նոր ուսումնական տարում երեխան վերադարձավ տուն՝ մոր մոտ: Նա շարունակեց հաճախել հանրակրթական դպրոց, իսկ դասերից հետո՝ կենտրոն, որտեղ նրան օգնում էին տնային առաջադրանքները կատարելու հարցում եւ որտեղ նա ընդգրկված էր մի շարք խմբակներում: Ծրագիրը մորն օգնեց գտնել ավելի կայուն աշխատանք՝ կարգավորված աշխատանքային գրաֆիկով: Ծրագրի մասնագետները, քահանայի հետ համագործակցելով, մի շարք հանդիպումներ ունեցան նրա հետ՝ մայրության մասին զրույցներ ունենալով նրա հետ եւ այդպես զարգացնելով ծնող լինելու գիտակցությունը: Բոլոր այս գործողությունները հիմնովին փոխեցին ընտանիքի կյանքը ոչ միայն արտաքուստ, այլեւ վերափոխեցին այն արժեքայնորեն՝ օգնելով հաղթահարել աղքատությունը:

.....

Կարելի է ասել, որ տեղի է ունենում հոգեւոր ռեսուրսի զարգացում, որն արտահայտվում է երկու կարեւորագույն ասպեկտներով.

- ներքին՝ հոգեբանական, որը փոխում է վարքային մոդելները եւ օգնում է վերակառուցել վարքի ապակառուցողական մոդելները. օրինակ՝ ընտանիքում բռնությունից հրաժարվելը, ծնողական վարքի վերանայում կամ շեղվող վարքի հաղթահարում, օրինակ՝ մարմանվաճառությունից հրաժարվելը եւ այլն
- արտաքին, որն արտահայտվում է սոցիալական բաղադրատարրի մասնակցությամբ, ինչպես՝ համայնքի գործունեության, փոխօգնության համապատասխան ցանցի մեջ ներգրավումը (օրինակ՝ եկեղեցական համայնքի մեջ) եւ, դրանով իսկ սոցիալական կապիտալի ձեռքբերումը, որը կարող է հիմք հանդիսանալ ընտանիքի կյանքի փոփոխության համար, եւ խթանել համայնքի ակտիվացումը:

Դրա հետ մեկտեղ, հարցվողների գնահատմամբ՝ կենտրոնի գործունեությունը շատ նշանակալի է, կայուն, քանի որ ներգրավում է ամբողջ ընտանիքը՝ փոխելով նրանց սխալ կենսակերպը: Փորձագետներից մեկի խոսքերով՝ կենտրոնը գրեթե անփոխարինելի է Մեծամորի համար: «Եթե նույնիսկ Մեծամորում այժմ ստեղծվեն տասնյակ նման կենտրոններ, այս կենտրոնը յուրահատուկ կլինի, քանի որ այժմ այն այնքան հաջող է համագործակցում քաղաքի բոլոր կարեւոր կառույցների հետ, որ նման վստահություն ձեռք բերելու համար ուրիշ կենտրոններից տասնյակ տարիներ կպահանջվեն»:

Աշխատանքը բարելավելու հիմնական խորհուրդը կենտրոնին նրա հզորությունների ընդլայնումն է:

8. Հիմնական եզրակացություններ. գործունեության գնահատում եւ հանձնարարականներ

Գյումրիի սոցիալ-կրթական կենտրոն

Ընդհանուր առմամբ՝ ծրագիրն իր գործունեությամբ կարող է բարձր գնահատականի արժանանալ: Դրա հետ մեկտեղ նրա սոցիալական

բաղադրիչը համակարգային զարգացման կարիք ունի, այդ թվում՝ համապատասխան կադրերի ներգրավման առումով:

Քանի որ, որպես կրթա-մշակութային ռեսուրս կենտրոն, ծրագիրը բոլոր տեսանկյուններից ավելի քան կայացած է եւ նշանակալի դեր ունի համայնքում, անհրաժեշտ է սոցիալական մասը եւս հասցնել նման մակարդակի՝ մատուցվող ծառայությունների որակական եւ քանակական բազմազանության առումով: Բացի այդ, մեծ պոնտեցիալ կա ծրագրի շրջանակներում սոցիալական տեղեկատվության կենտրոն ձեւավորելու համար, առավել եւս, որ դրա համար առկա են համապատասխան հնարավորություններն ու ռեսուրսները: Նման կենտրոնը կարող էր ոչ միայն սոցիալական օգնություն ցուցաբերել, այլեւ տեղեկություններ տրամադրել այն կազմակերպություններին եւ անհատներին, որոնք պատրաստ են օգնություն ցուցաբերել, բայց ոլորտում ոչ բավարար ներգրավված լինելու պատճառով չգիտեն, թե ինչպես ավելի հասցեագրված անեն դա: Այսպես տեղի կունենար նաեւ վերաուղղորդում. կենտրոնը կարիքավորներին տեղեկություններ կտրամադրեր այն կազմակերպությունների մասին, որոնք կարող են նրանց աջակցել:

Գլխավոր հանձնարարականը հետեւյալն է. ծրագրում սոցիալական աշխատանքի զարգացում եւ հզորացում, համագործակցության ընդլայնում այլ սոցիալական ծրագրերի հետ, որոնք բավականին շատ են Գյումրիում եւ որոնցից շատերը մեծ փորձ ունեն: Սա կօգնի մեծացնել կենտրոնի ներդրումը քաղաքում աղքատության հաղթահարման գործընթացի մեջ, որի կարիքն իսկապես զգալի է:

Միաժամանակ կարելի է վերանայել ծրագրի ռեսուրսները եւ հնարավորությունները ծրագրի շրջանակներում համայնքային երկխոսության գործընթացի կազմակերպման համար, որը կնպաստի զանազան կոնֆլիկտների հաղթահարմանը:

Մեծամորի համայնքային կենտրոն

Ըստ գնահատման բոլոր մեթոդների՝ այս կենտրոնը կարող է արժանանալ առավել քան բարձր գնահատականի: Բոլոր երեք մեթոդները բացահայտեցին ծրագրի խիստ դրական ազդեցությունը կյանքի ամենատարբեր ոլորտներում, ինչպես առանձին մարդկանց, այնպես էլ, ընդհանուր առմամբ, համայնքի կյանքում:

Միաժամանակ մի քանի խորհուրդներ կան, որոնց կատարումը դրականորեն կանդրադառնար կենտրոնի աշխատանքի վրա.

Անհրաժեշտ է բարելավել կենտրոնի պայմանները եւ ընդարձակել տարածքը, քանի որ շահառուների եւ կենտրոնի աշխատանքներում ներգրավված լինելու ցանկացողների թիվը ակնհայտորեն գերազանցում է կենտրոնի հնարավորությունները:

Արտահամայնքային համագործակցությունն ընդլայնելու համար անհրաժեշտ է ընդլայնել PR-ի հնարավորությունները եւ ավելի հիմնավոր կերպով զբաղվել կենտրոնի գործունեության լուսաբանման հարցով:

Անհրաժեշտ է ընդլայնել կամավորության հնարավորությունները, հատկապես համայնքի երիտասարդության համար: Պետք է մեծ ուշադրություն դարձնել արական սեռի կամավորների ներգրավման վրա՝ որոշակի գենդերային աններդաշնակության հաղթահարման եւ շահառուների համար տղամարդու դրական գենդերային մոդելների ստեղծման համար:

Այս խորհուրդների կյանքի կոչումը կենտրոնին թույլ կտա ավելի արդյունավետ գործել եւ ամրապնդել ներկայիս ազդեցությունը:

9. Եզրակացություններ հետազոտության մեթոդների կիրառման վերաբերյալ

Պարզ է, որ բոլոր երեք մեթոդները շատ արդյունավետ էին կիրառման ընթացքում:

9.1 PIA մեթոդը թույլ տվեց մանրամասն դիտարկել ծրագրի ազդեցությունը հայաստանյան այնպիսի հրատապ խնդրի վրա, ինչպիսին է աղքատությունը:

9.1.1 Օգտակար կլիներ նույն մեթոդով գնահատում իրականացնել ինչպես մինչեւ ծրագրի իրականացումը, այնպես էլ դրա ընթացքում եւ դրանից հետո, քանի որ անցումային տնտեսությամբ երկրները, ինչպիսին է նաեւ Հայաստանը, միշտ չէ, որ կարողանում են պահպանել այն նույն պայմանները, որոնք առկա էին ծրագրի սկզբնական փուլում. պայմանների փոփոխմամբ հնարավոր է նաեւ ազդեցության փոփոխություն: Ուստի, այս մոտեցումը կարող է ունենալ լուրջ մոնիթորինգային նշանակություն, ինչը օգտակար կլինի նաեւ այն դեպքում, երբ ծրագրի ազդեցությունը սկզբնական շրջանում դժվար է գնահատել:

9.1.2 Ակնհայտ է, որ մեթոդաբանությունը կատարելապես համապատասխանում է սոցիալական ծրագրերի ազդեցության գնահատմանը, եւ կարեւոր է, որ այս միջոցով կարելի է առանձնացնել այնպիսի ասպեկտներ, ինչպես՝ նախագծի համապատասխանությունը պետության ընդհանուր ռազմավարությանը: Նման գնահատականը կարող է օգնել հասկանալ, թե ինչպիսի դժվարություններ կարող են հանդիպել ծրագրի իրականացման ընթացքում եւ ինչ ոլորտներում է հնարավոր պետական կառույցների հետ համագործակցությունը:

9.1.3 PIA մեթոդը կարող է օգնել ծրագրի թերությունների բացահայտման հարցում եւ աղքատության հաղթահարման նկատմամբ ավելի համակարգային մոտեցում ցուցաբերել: Ավելին, այս մեթոդը կարող է որպես հիմք վերցվել, ըստ չափանիշների, ծրագրերի մշակման եւ դրանց նպատակների սահմանման համար:

9.1.4 PIA մոտեցումը ամենաժամանակատարն էր, քանի որ այն ենթադրում է ոչ միայն անմիջական հարցման իրականացում շահարգիռ կողմերի հետ, այլ նաեւ փաստաթղթերի մեծածավալ վերլուծություն՝ կապված ծրագրի իրականացման, ինչպես նաեւ երկրի եւ համայնքի աղքատության վիճակի վերլուծության հետ:

9.1.5. Բացի այդ, PIA մոտեցումը հիմնված է մատրիցային վերլուծության վրա, որը նույնպես կապված է ժամանակի մեծ ծախսերի հետ:

9.1.6. PIA մոտեցումը պահանջում է որոշակի մասնագիտական գիտելիքներ, քանի որ իր մեջ ներառում է գործոնային վերլուծության տարրեր, ինչը դժվարացնում է դրա կիրառումը հետազոտողների լայն շրջանակի համար:

9.2 DNH մեթոդը համայնքային գործընթացների գնահատման ժամանակ բավականին հետաքրքիր էր: Այս մեթոդը թույլ տվեց համակարգված կերպով դիտարկել համայնքի ինտեգրման բոլոր ռեսուրսները, եւ ինքը՝ հետազոտությունը, արդեն միավորող դեր էր կատարում, քանի որ հարցվողներին թույլ էր տալիս.

- ☐ գիտակցել համայնքի ապաինտեգրացման աստիճանը
- ☐ տեսնել ապակառուցողական գործոնները, որոնք հաղթահարման կարիք ունեն
- ☐ առանձնացնել կառուցողական ասպեկտները, այսպես կոչված համայնքի «ուժեղ կողմերը», որոնց վրա կարելի է հենվել լարվածության բոլոր տեսակների հաղթահարման եւ կարեւորագույն նպատակների շուրջ համայնքի համախմբման ժամանակ:

9.2.1 Մեթոդի օգտագործման ընթացքում արված եզրակացությունները կարելի է արդյունավետ կերպով կիրառել նաեւ համայնքային զարգացման ծրագրերում, այլ ոչ միայն կոնֆլիկտների հաղթահարման գործընթացում: Համայնքի տարանջատվածության պայմաններում (անգամ առանց վառ արտահայտված կոնֆլիկտների) համայնքի միավորմանն ուղղված ցանկացած գործողություն կարող է հիմնվել տվյալ մեթոդի կիրառման միջոցով ստացված եզրակացությունների վրա:

9.2.2 Հաշվի առնելով հայ հասարակության ներփակվածությունը (ատոմիզացվածությունը) եւ համայնքների ոչ բավարար համախմբվածությունը, որը հանգեցնում է համայնքային ռեսուրսների կորստի եւ համայնքային ինքնաօգնության պոտենցիալի ոչ բավարար օգտագործմանը, այս մեթոդի միջոցով ստացված տվյալները կարող են համայնքային միջամտության հիմք դառնալ՝ ինչպես բացասական միտումների հաղթահարման, այնպես էլ դրականների հզորացման առումով: Այսինքն՝ ձեռքի տակ ունենալով նման հետազոտության տվյալները, յուրաքանչյուր համայնք կարող է ստեղծել իր զարգացմանը խոչընդոտող գործոնների հաղթահարման ռազմավարություն:

9.2.3. DNH մոտեցման կիրառումը պահանջում է որոշակի մասնագիտական գիտելիքներ, քանի որ իր մեջ ներառում է գործոնային վերլուծության տարրեր, ինչպես եւ PIA մոտեցումը, ինչը եւ սահմանափակում է նրա կիրառումը:

9.2.4. Եթե գնահատվող ծրագիրը ակտիվորեն ներգրավված է կոնֆլիկտի մեջ, մասնավորապես հակամարտ կողմ է հանդիսանում, ապա մեթոդը թույլ չի տալիս ռեալ գնահատել ծրագրի ազդեցությունը համայնքի կյանքի վրա:

9.3 Making a Difference մեթոդը նույնպես կարող արդյունավետ գործիք դառնալ ինչպես վերջնական, այնպես էլ ընթացիկ գնահատումների համար, հատկապես՝ երկարաժամկետ փոփոխությունների եւ ծրագրի ռազմավարական նպատակների, ինչպես նաեւ տվյալ փուլում ձեռք բերված արդյունքների համեմատության առումով:

9.3.1. Այս մոտեցումը հատկապես արդյունավետ է ծրագրի բազմամակարդակ ազդեցության բացահայտման համար եւ օգնում է լրացնել բացթողումները ծրագրում, հաղթահարել նրա չափից դուրս միկրո կամ մակրոուղղվածությունը:

9.3.2. Բացի այդ, մեթոդը թույլ է տալիս ծրագիրը դիտարկել տարբեր տեսանկյուններից եւ տեսնել նրա ազդեցությունը ոչ միայն թիրախային խմբի վրա, այլեւ նրանց վրա, ովքեր ապրում են համայնքում, սակայն շահառու չեն:

9.3.3. Միաժամանակ մոտեցումը թույլ է տալիս տեսնել չպլանավորված կամ ծրագրի իրականացման «կողմնակի էֆեկտ» հանդիսացող ազդեցությունը: Այս կարգի էֆեկտները կարող են ոչ պակաս արժեքավոր լինել, քան պլանավորվածները: Ավելին, նրանք կարող են ծրագրերի վերանայման կամ ընդլայնման հիմք հանդիսանալ, հատկապես Հայաստանում, ինչպես պաշտոնական, այնպես էլ մի շարք ոչ պաշտոնական կառույցների (բակային կամ հարեւանների համայնքը, ընդլայնված ընտանիքը եւ այլն) բարդ փոխհարաբերությունների պայմաններում, որոնց ազդեցությունը կամ որոնց վրա ազդեցությունը դժվար է հաշվի առնել պաշտոնական տվյալների վերլուծության ընթացքում:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ իրականացված հետազոտությունը մասնագիտական հետազոտական մեթոդների կիրառման շատ հետաքրքիր եւ հարստացնող փորձ հանդիսացավ, որը թույլ տվեց ոչ միայն նորովի դիտարկել հովանավորվող ծրագրերը, այլեւ նորովի կիրառել հետազոտության գործիքները հատուկ մշակութային-տնտեսական միջավայրում:

Ինչ փոփոխություններ է բերել ՀԿՍ-ն որպես էկումենիկ ընտանիքի անդամ

Հարկ է նշել, որ երկու կենտրոններն էլ ֆինանսավորվում են էկումենիկ ՀԿՍ-ի եւ նրա եվրոպական գործընկերների կողմից: Սակայն առավել կարեւոր է այն էկումենիկ միասնությունը, որը ձեւավորվել է ՀԿՍ-ի բազմամյա աշխատանքի ընթացքում: Միայն այն միտքը, որ մեզ օգնում են քրիստոնեական այլ եկեղեցիներ, նպաստում է Հայաստանում միջեկեղեցական հարաբերությունների նկատմամբ նոր հայացքի ձեւավորմանը:

Երկու կենտրոններն էլ աշխատում են եկեղեցուն կից (Գյումրիի կենտրոնը ավելի մեծ, Մեծամորի կենտրոնը՝ ավելի փոքր չափով): Առաջին անգամ, շնորհիվ ՀԿՍ-ի ջանքերի, ծնվեց «հոգաբարձուների էկումենիկ խուրհուրդ» հասկացությունը, ինչպես դա տեսնում ենք

Գյումրիի կենտրոնում, որտեղ համատեղ աշխատում են Հայ Առաքելական եւ Կաթողիկե Եկեղեցիների ներկայացուցիչները: Մեծամորի կենտրոնն ակտիվորեն համագործակցում է UMCOR-ի հետ: Մի շարք ՀԿ-ներ (որպես ՀԿՍ-ի գործընկերներ) հաջողությամբ աշխատում են Հայ Ավետարանչական ընկերակցության հետ: Միջեկեղեցական պարբերական հավաքների ժամանակ առաջանում են ոչ միայն ծանոթություններ եւ բարեկամություն, այլեւ գծագրվում են փոխադարձ օգնության եւ համագործակցության ռազմավարություններ:

Ընդհանուր առմամբ, նման համագործակցությունը թույլ է տալիս ոչ միայն խորացնել կապերը, այլեւ նորովի գնահատել պետության առավել կենսական խնդիրների լուծման շուրջ ուժերի միավորումը՝ ինչպես ռեսուրսների ճիշտ բաշխման, այնպես էլ մեթոդոլոգիական ու գործառնական տեսակետներով փոխհարստացնող փորձի ձեռքբերման տեսանկյունից, որի օրինակը հենց այս նախագիծն է:

Օգտագործված գրականության ցանկ

1. *Promoting Pro-Poor Growth,* Practical Guide to Ex Ante Poverty Impact Assessment, DAC Guidelines and Reference Series, a DAC Reference Document, OECD (Organization for Economic Co-operation and Development), 2007.

2. *Impact Assessment for Pro-Poor Accountability: Innovation and Challenges,* Mayuox L. Mosedale S., Journal of International Development (March), 2005

3. *Do no Harm Project: Trainer's Manual, Training Case Studies,* Collaborative Learning Projects, 2004.

4. *Do no Harm Project: Workbook,* Collaborative Learning Projects, 2007.

5. *Do no Harm Project: Trainer's Manual, Workshop Modules,* Collaborative Learning Projects, 2004.

6. *Making a Difference?* A methodology for assessing impact, Trainers manual. 2004.

7. *ACT Development: A guide to assessing our contribution to change.*